



Երեխայի Խնամքի գումար (Kinderbetreuungsgeld) 1.1.2008 ից սկսեալ

Երեխայի խնամքի համար տրուող գումարը, մի նիւթական օգնութիւն է ծնողներին, որ կը վճարուի ծնած երեխայի մինչեւ 3 տարեկան դառնալը, եթէ դիմում ներկայացնողները (այսինքն՝ ծնողը եւ երեխան) յետեւեալ անձերու խմբին կը պատկանին:

- Աւստրիական քաղաքացիներ.
- Օտարերկրեայ քաղաքացիները, (ոչ եւրոպական երկիրներ) որոնք ունեն մշտական կամ ժամանակաւոր երկրում ապրելու թոյլատրութիւն: (NAG-Karte)
- Եւրոպական երկիրների քաղաքացիները, որոնք կարող են օրէնքով փաստել իրենց գրանցումը (կամ թէ մինչեւ 1.1.2006 տրած գրանցման ապացոյցը):
- Քաղաքական ապաստանի իրաւունք ունեցողները:
- Նպաստաւոր պաշտպանութեան իրաւունքի տէր անձեր, որոնք ունեն աշխատանք եւ չեն ստանում ոչ մի ձեւի սոցիալական օգնութիւն

Եւ եթէ

- Աւստրիաի մէջ երեխայի հատկացւած գումար են ստանում (Familienbeihilfe):
- Եթէ ծնողը եւ երեխան ապրում են միասին նոյն հարկի տակ:
- Եթէ ծնողքի եւ երեխայի հիմնական բնակավայրը Աւստրիաում է:

Ծնողները կարող են ստանալիք երեխայի խնամքի փողը բաժնել, ըստ որի ամենակարճ ժամկետը 3 ամիս պէտք է լինի:

1.1.2008ից յետոյ ծնած երեխաների ծնողները ունեն այս գումարը ստանալու 3 տարբերակ:

Ծնողքէն մէկը առանձին կստանայ ծնողները բաժնում են այդ գումարը

	տեւողութիւն	գումար	տեւողութիւն	գումար
տարբերակ 1	Երեխայի 30. ամսական	€ 14,53 օրական / € 436 ամսական	Երեխայի 36. ամսական	€ 14,53 օրական / € 436 ամսական
տարբերակ 2	Երեխայի 20. ամսական	€ 20,80 օրական / € 624 ամսական	Երեխայի 24. ամսական	€ 20,80 օրական / € 624 ամսական
տարբերակ 3	Երեխայի 15. ամսական	€ 26,60 օրական / € 798 ամսական	Երեխայի 18. ամսական	€ 26,60 օրական / € 798 ամսական

Ուշադրութիւն՝ Դիմեցէք ժամանակին, ծայրահեղ դէպքում դիմեցէք, երեխայի հատկացւած գումարի որոշումը ստանալուց առաջ (Familienbeihilfenbescheid), որովհետեւ այդ գումարը յետհաշւարկով 6 ամիսների համար կը վճարուի:

Ուշադրություն՝ Հղիության արձակուրթից յետոյ, աշխատանքի վերադառնալու իրաւունքը, առաւելագոյն մինչեւ երեխայի 2 տարեկան դառնալն է, որ անկախ է երեխայի խնամքի գումարը ստանալու տեւողութիւնից:

Վաստակի սահմանները (Zuverdienstgrenze)

Երեխայի խնամքի գումարը (KBG), ստանալու իրաւունք, ունեն՝ տարեկան **առաւելագոյն €16.200 (ամսական €1.266)** եկամուտ ունեցող ծնողները:

Ուշադրություն՝ Այսինքն եթէ տարեկան աշխատավարձի գումարը բարձր է վերը նշած սահմանից, պէտք է ստացած երեխայի խնամքի գումարը մինչեւ տարւայ վերջ յետ վճարի: Միւս ծնողի աշխատավարձը հաշւի չի առնուում:

Նպաստ (Zuschuss)

Այն ընտանիքները կամ միայնակ անձիք, որոնց աշխատավարձը ցածր է, կարող են օրը € 6.06 նպաստ ստանալ:

Ուշադրություն՝ Վճարւած նպաստը, աւելի լաւ նիւթական պարագային, յետ կը պահանջւի:

Դիմում ներկայացնել (Beantragung)

Երեխայի խնամքի գումարը (KBG) ստանալու համար դիմումը պէտք է ներկայացւի՝ հիւանդութեան ապահովագրութեան համապատասխան բաժանմունքին (Krankenversicherungsträger):

Ուշադրություն՝ Ծնողը եւ իր երեխան պէտք է այցելեն բոլոր մայր-երեխայ-անձնագրին (Mutter-Kind-Pass) պատկանող բժշկական քննութիւններին եւ այդ բժշկական ստացումները մինչեւ երեխայի 18 ամսական դառնալը, ներկայացնեն հիւանդութեան ապահովագրութեան կազմակերպութեան :Հակառակ դէպքում երեխայի խնամքի գումարը (KBG) կարող է ընդհատուել:

Որովհետեւ այս տեղեկութիւնները համառոտ գրւած են, Կը խնթրենք մանրամասութիւնները տեղեկանալու համար ղիմեցէք WGKK, 1070 Wien, Andreasgasse 3, եւ կը նշենք որ,եթէ հանդերձ մեր ուշադրութեան, սխալներ գտնուին, պատասխանատւութիւն չենք կրել:

Männer und Frauen: 1010 Wien, Hoher Markt 8/4/2 Tel: 712 56 04	Frauen: 1010 Wien, Marc Aurel Straße 2a/6/2/10 Tel: 982 33 08	
http://www.migrant.at E-Mail: migrant@migrant.at	http://www.migrant.at E-Mail: migrantin@migrant.at	
Diese Publikation wird aus Mitteln des Arbeitsmarktservice (und des Europäischen Sozialfonds) sowie der Magistratsabteilung 17 gefördert.		
 Arbeitsmarktservice Wien	 WIEN IST VIelfALT. MA 17 StoDt+Wien	 esf EUROPÄISCHER SOZIALFONDS